

Ոչինչ չի կարող խանգարել ՀՅԴ-ի՝ Արցախի կողքին ամուր կանգնելու առաքելութեանը



ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեանը հոկտեմբերի 27-29-ը իր հերթական այցն է կատարել Արցախ:

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչն իր այցելութեան ընթացքում ունեցել է մի շարք հանդիպումներ, խորհրդակցութիւններ եւ ժողովներ:

Այցելութեան առաջին օրը Յակոբ Տէր-Խաչատուրեանը հանդիպել է Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանի եւ Արցախի Ազգային ժողովում ներկայացուած ընդդիմադիր «Արդարութիւն» եւ «Արցախի ժողովրդավարական» կուսակցութիւնների ղեկավարների հետ:

Այցելութեան երկրորդ օրուայ սկզբին հանդիպում տեղի ունեցաւ ԱՀ Անվտանգութեան խորհրդի քարտուղար Վիտալի Բալասանեանի հետ: Իսկ օրուայ մնացած մասը յաջեցած էր ՀՅԴ կազմակերպական միաւորների եւ շարքերի հետ հանդիպումներով եւ ժողովներով: Նախ կայացաւ հանդիպում ՀՅԴ Արցախի երիտասարդական միութեան վարչութեան հետ, ապա գումարուեց ժողով՝ ՀՅԴ Արցախի Հայ Դատի յանձնախմբի հետ: Օրուայ երկրորդ կէսին տեղի ունեցաւ նաեւ ՀՅԴ Արցախի ընկերական ընդլայնուած ժողով՝ չըջաններից Ստեփանակերտ ժամանած ընկերների եւ ներկայ ու նախկին պատասխանատու մարմինների հետ:

Այցելութեան ընթացքում Յակոբ Տէր-Խաչատուրեանը հանդիպումներ է ունեցել նաեւ ԱՀ նախագահ Արայիկ Յարութիւնեանի եւ նախկին նախագահներ Արկադի Ղուկասեանի ու Բակո Սահակեանի հետ:

Այցելութեան աւարտին ՀՅԴ Արցախի ԿԿ-ի հետ ամփոփուել են հանդիպումների արդիւնքները:

Հանդիպումների ընթացքում ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցչին ընկերակցել է ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Արթուր Մոսիսեանը:

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր-Խաչատուրեանի հետ Արցախ կատարած այցի կապակցութեամբ գրուցել է «Ապառաժ»-ը:

Անդրադառնալով հանդիպումների ընթացքում առձարծուած թեմաներին, Յակոբ Տէր-Խաչատուրեանը նշեց, որ հիմնականում քննարկուել են Արցախի կարգավիճակին, նրա անվտանգութեանը, ժողովրդի տրամադրուածութեանը, Արցախ-Սփիւռք կապերի ամ-

րապնդմանը վերաբերող մի շարք հարցեր, ինչպէս նաեւ անդրադարձ է եղել Արցախում կատարած աշխատանքին, մասնաւորապէս տեղահանուած բնակչութեան բնակարանային ապահովուածութեան եւ նրանց սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղութեամբ:

ԱՀ իշխանութիւնների հետ ունեցած հանդիպումները Յակոբ Տէր-Խաչատուրեանը արդիւնաւէտ համարեց՝ նշելով, որ իշխանութիւնների հետ ունեցած տարակարծութիւնները չեն կարող խոչընդոտել ՀՅԴ-ին՝ Արցախի կողքին կանգնելու, նրան ամէն գնով աջակցելու եւ սկսուած քաղաքական ու մարդասիրական աշխատանքները շարունակելու համար:

Դաշնակցութեան Արցախի համար տարուող աշխատանքներն այս պահին ընթանում են չորս ուղղութիւններով: Նախ՝ միջազգային առումով Արցախի կարգավիճակի հարցի միջազգայնացում, եւ ԱՀ Մինսկի խմբի ձեւաչափով բանակցութիւնների վերսկսման խթանում եւ Արցախի անկախութեան ճանաչման՝ ազգերի ինքնորոշման իրաւունքի սկզբունքի կիրառման ուղղութեամբ աշխատանքներ, երկրորդ՝ ՀՅԴ Արցախի ԿԿ-ի միջոցով Արցախի ներքաղաքական կեանքին մասնակցութիւն եւ խնդիրների լուծում, երրորդ՝ ներկուսակցական առումով ներքին կազմակերպական քննարկումներ, երիտասարդութեան ներգրաւում եւ Հայ Դատի աշխատանքներ, եւ վերջապէս՝ Արցախի համար մարդասիրական եւ նիւթական օժանդակութեան տրամադրում:

Յակոբ Տէր-Խաչատուրեանը կարեւորեց ՀՅԴ Արցախի ԿԿ-ի եւ չըջանների կոմիտէների ու պատասխանատու ընկերների հետ հանդիպումը: Քնարկուել են Արցախի իրավիճակի, առաջնահերթութիւնների եւ ապագայ անելիքների վերաբերեալ մի շարք հարցեր: ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը ոչ միայն գեկուցել է Հայաստանի ու Արցախի ներկայ իրավիճակի եւ աշխարհով մէկ տարուող աշխատանքների մասին, այլ նաեւ լսել է Արցախի պատասխանատու մարմինների ներկայացուցիչների կարծիքներն ու առաջարկները:

Անդրադառնալով Արցախի ապագայի վերաբերեալ Դաշնակցութեան տեսականին, Յակոբ Տէր-Խաչատուրեանը ընգծեց, որ Դաշնակցութեան համար անընդունելի է, որ Արցախը լինի Ադրբեջանի գերիշխանութեան տակ: ՀՅԴ օրակարգում է Արցախի՝ որպէս անկախ պետութեան կայացումը, զարգացումը եւ միջազգային հանրութեան կողմից նրա անկախութեան ճանաչումը, որից յետոյ բնականոն հոյովոյթով մայր հայրենիքի հետ վերամիաւորումը:

Նրա խօսքով՝ ՀՅԴ-ն ոչ պատերազմի ընթացքում եւ ոչ էլ դրանից յետոյ չի դադարեցրել իր ողջ ներուժը ի սպաս գնել Արցախի եւ Հայաստանի հզօրացմանը:

Անդրադառնալով Հայաստանում ստեղծուած ճգնաժամին Յակոբ Տէր-Խաչատուրեանը նշեց, որ այդ ճգնաժամը արդիւնք է ՀՀ իշխանութիւնների ապագաւոր քաղաքականութեան, հայրենիքը ահաւոր պար-



Շաբաթ, 30 հոկտեմբերի կանուխ առաւօտեան, արդարութեան մարտիկ Համբիկ Սասունեան, մօտ 40 տարի Քալիֆօրնիոյ բանտերուն մէջ արգելափակուած մնալէ ետք, հայրենիքէն ամբողջ հայ ազգին յղուած պատգամով մը աւետեց ազատութեան մէջ գտնուիլը:

Պատգամին մէջ Համբիկ Սասունեան կը նշէ.

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Ամենայն ուրախութեամբ կը գրեմ պատգամս ձեզի՝ Հայաստանէն: Մօտաւորապէս 40 տարիներ անց, պատիւը ունիմ ըլլալու հայրենի հողի վրայ, խմել հայրենի ջուրը, շնչել օդը եւ զգալ ընտանեկան ջերմութիւնը:

Ձեր ցուցաբերած աջակցութիւնը տարիներու ընթացքին մշտապէս քաջալերած է զիս եւ դրական ներգրում ունեցած է իմ դժուարագոյն օրերու: Ուրիշ շնորհակալութիւններս կ'ուզեմ յայտնել բոլոր անոնց, որոնք նամակցած են, այցելած են, եւ ընդմիշտ պահած են զիս իրենց սրտերուն մէջ: Վերջապէս հասած եմ տուն»:

տութեան առաջնորդուելուն եւ ծայրայեղ զիջումների գնալու իրենց պատրաստակամութեան: Այս իրավիճակը ստեղծելուց բացի, ՀՀ գործող իշխանութիւնները նպաստել են նաեւ ընդհանուր համազգային օրակարգի շուրջ հայութեան համախմբումը ապահովելու փոխարէն պառակտիչ գործողութիւնները ձեւաւորելով: «Այդ պառակտիչ գործողութիւնները հիմա ուզում են տեղափոխել նաեւ սփիւռք: Ամէն ինչ արւում է դրան դիմակայելու, այդ կործանարար քաղաքականութեանը առաջն առնելու եւ պառակտում թոյլ չտալու համար»,– ասել է նա:

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցչին անդրադարձաւ նաեւ համայն հայութեան մօտ առկայ ընկճուածութեան մթնոլորտին, որը հետեւանքն է պատերազմում կրած աղէտալի պարտութեան: Նա վստահ է սակայն, որ մեր ժողովուրդը կը վերագտնի իր պետական ուժն ու վճռակամութիւնը, ոտքի կը կանգնի եւ կը շարունակի հայ ժողովրդի իրաւունքներին ի խնդիր ազգային-ազատագրական պայքարը:



BOOK YOUR
TEST DRIVE TODAY!

— All-New —
CIVIC
— SEDAN —

TRO BACHEKJIAN
MIKE TOROSSIAN
KEVORK ASADOURIAN

HONDA
GABRIEL

HONDA

7000, boul. Henri-Bourassa Est,
Montréal-Nord, QC H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիիի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



«Քաղաքական մտքի տիասութիւն ունեն այս իշխանութիւնները»

Սփիւռքը Յեղասպանութեան արդիւնք է՝ թուրքի նպատակը Հայաստանի անէ-ացումն է, իսկ Արցախեան վերջին պատերազմը պանթիուրանիզմի ծրագրի մաս է՝ Yerkir.am-ի հետ հարցազրոյցում ասաց Գանատայի «Հորիզոն» շաբաթաթերթի Վա-րիչ-խմբագիր Վահագն Գարագաշեանը, որի նախնիները մասնակցել են Մուսա լեռան հերոսամարտին, ապա գերդաստանը Կիլիկիայից տեղափոխուել Լիբանան՝ եղել Այն-ճարի հիմնադիրներից, իսկ այժմ էլ նա հաստատուել է Մոնթրէալում։

«Որպէս Հայոց Յեղասպանութեան ժառանգորդ սերունդ մեզ համար ոչ միայն տարօրինակ է այս իշխանութիւնների ընթացքը, այլեւ մտածել է տալիս, որ, մանա-ւանդ երբ այսպիսի ճգնաժամային օրեր է ապրում համայն հայութիւնը, ինչպիսի քա-ղաքական ուղեգիծ են որդեգրել այս իշխանութիւնները. նման քաղաքական ուղեգի-ծը, որն, ըստ իրենց, ենթադրում է թշնամի երկու հարեւան երկրների հետ ապաշըջա-փակման գործընթաց սկսել՝ կարծելով, որ այդ գործընթացի միջոցով ապագայում կ'ու-նենանք տնտեսապէս կայուն պետութիւն, ամենամեծ սխալն է եւ փաստում է, որ իս-կապէս քաղաքական մտքի տհասութիւն ունեն այս իշխանութիւնները»,– ասաց Վա-հագն Գարագաշեանը։

Նա վստահ է, որ այս գործընթացը կարող է շատ ծանր հետեւանքներ ունենալ Հայաստանի համար, եւ համայն հայութիւնը պէտք է աշխատանք տանի, որ այդ ըն-թացքը կասեցուի այնպէս, ինչպէս տարիներ առաջ հայ–թուրքական արձանագրու-թիւնների գործընթացը կասեցուեց։

Սփիւռքն ունի այդ փորձառութիւնը՝ Սփիւռքը Յեղասպանութեան արդիւնք է, փաստեց նա, թուրքի նպատակը Հայաստան պետութեան վերջնական անէացումն է, որովհետեւ ունի պանթուրանական իր յստակ ծրագիրը։

«Եթէ ոմանք կարծում են, որ համաթուրանականութիւնն այսօր պարզապէս առասպել է, շատ են սխալւում, արդիւնքը՝ Արցախի վերջին պատերազմը, որը մաս է կազմում թուրքական այդ մեծ ծրագրին»,– ասաց Վահագն Գարագաշեան։

Հայաստան պետութեան այսօրուայ իշխանութիւններն ու Սփիւռքը համատեղ օրակարգ ձեւաւորելու խնդիր ունեն այսօր։ Յեղասպանութեան հետեւանք Սփիւռքը չի կարող հրաժարուել Հայոց Յեղասպանութեան հարցի հետապնդումից, մինչդեռ ՀՀ իշխանութիւնները Թուրքիայի հետ բարեկամանալու ազդակներ են ուղարկում։ Վա-հագն Գարագաշեանը համոզուած է, որ եթէ քաղաքական գիծն այս ուղղութեամբ ըն-թանայ՝ առաջիկայում հարցեր են առաջանալու։

«Սփիւռքում գործող ՀՅԴ Հայ Դատի յանձնախմբերը 40–50 տարուայ իրենց աշխատանքների արդիւնքով հասել են մեծ պետութիւնների կողմից Հայոց Յեղասպա-նութեան ճանաչման բանաձեւերի ընդունման։ Դրանք իսկապէս տարիների աշխա-տանքի արդիւնք են։ Հիմա եթէ այս իշխանութիւնների կողմից նման գործընթաց սկսուի, իսկապէս որոշ պետութիւններ հարցականի տակ են առնելու, թէ այսքան տարի ձեր դատի հետապնդումից յետոյ այս ներկայ ընթացքը ի՞նչ է։ Բայցեւայնպէս աշ-խարհում գործող մեր Հայ Դատի յանձնախմբերը վճռական են. անցեալում էլ ունեցել

ԳՈՐԾԻ ԱՌԻԹ

Դերձակութեան “Arthur Montreal” հաստատութիւնը կարիքը ունի դերձակներու, կարողներու եւ ձեւողներու։ Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 514-843-0522 թիւին։

Վարժանք արհեստի

TAILORS & SHIRT MAKERS NEEDED

“Arthur Montreal” Bespoke Tailors & Shirt Makers are looking for experienced seamstress, cutters and tailors. If interested, please call 514-843-0522. Training will be provided.



ենք մարտահրաւէրներ, այսօր նոյնպէս ունենք մարտահրաւէրներ, իսկ այսօրուայ մեր գլխաւոր մարտահրաւէրը Արցախն է, որովհետեւ Արցախն այսօրուայ դրու-թեամբ լքուած է»,– ասաց Վահագն Գարագաշեանը։

Արցախն ուրանալու նոր մտայնութիւնը ամենավտանգաւորն է՝ համոզուած է նա։

«Բերեմ Գանատայի օրինակը. Գանատայի եւ Դանիայի միջեւ ջրային սահմա-նի վրայ կայ փոքր կղզի, որ կոչւում է Հանս ալլնդ։ Այս կղզու տարածքը 1,3 քառ. կմ է։ Գանատայի տարածքը 9 մլն. 985 հազ. քառ. կմ է։ Բայց Գանատան որպէս ինքնիշխան պետութիւն ասում է՝ այս կղզին ինձ է պատկանում իրաւականօրէն։ Իսկ Դանիայի Հանրապետութիւնն ասում է՝ ոչ, այս կղզին ինձ է պատկանում։ Ուրեմն տարին մէկ անգամ իւրաքանչիւր երկիր փոքր մարտանաւերով գալիս է այս կղզին, իջեցնում միւս երկրի դրոշն ու բարձրացնում իրենց դրօշը։ 9 մլն. 985 հազ. քառ. կմ տարածք ունեցող երկիրը պայքարում է 1,3 քառ. կմ տարածքի համար։ Իսկ մենք արդէն կորցրել ենք 10 հազար քառ. կմ եւ այսօր արդէն պատմական Հայաստանի այդ ամբողջ տարածքը ուրանալու ընթացքի մէջ ենք»,– ասաց Վահագն Գարագաշ-եանը։

Նա վստահ է, որ սփիւռքահայ նախակրթարանի որեւէ աշակերտի եթէ հարց-նես՝ Արցախն ուրանալը դաւաճանութի՞ւն է, յստաօրէն կը պատասխանի՝ Արցախն ուրանալը դաւաճանութիւն է եւ ազգադաւուրթիւն։

ԱճՃԱ Բալեան

Voyages

HAIG

Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝

(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊՒ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱՒՊԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

***Նոր Յաւոյ՛՛**

Voyages Haig Travel

4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676

Email info@haigtravel.ca

Թադէոս Յակոբեան

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՆՈՐԻԶՈՆ

«Հորիզոն»-ի հրատարակութեամբ լոյս տեսաւ Թադէոս Յակոբեանի «Պատմական Հայաստանի քաղաքները» աշխատութեան արեւմտահայերէնի վերածուած հատորը, մեկէնասութեամբ Մոնթրէալի Հայ կեդրոնի Տարեց-ներու միութեան։

Գիրքը նուիրուած է Հայոց ցեղասպանութեան նահատակներու յի-շատակին։

Գիրքը ստանալու համար դիմել.-

Մոնթրէալ՝ «Հորիզոն»ի խմբագրատուն, 514-332-3757

Թորոնթօ, Համազգայինի գրատարած, Հայ Կեդրոն (Կիրակի Օրեր)

Սակ՝ \$20

**ՀՕՄ-ի Թորոնթոյի Մասնաճիւղի Տոհմիկ Օր՝ Սուրբ Երկրի եւ Յորդանանի Հայ
Գաղութները**

Հարցազրույց ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ինուքիւն» մասնաճիւղի Տոնմիկ Օրոուան յանձնախումբի ատենապետուհի Զեփիւն Տորնային հետ

1) Ամէն տարի մեծ խանդավառութեամբ ՀՕՄ-ը կը նշէ Տոհմիկ օր-
ուայ նախաձեռնութիւնը: Ի՞նչ կը ծրագրէք այս տարուան համար:

Հայ Օգնություն Միությունը աւելի քան հարիւր տասը տարիներ իրագործեց ան-
սակարկ եւ նուիրեալ ծառայութիւն Սփիւռքի Հայ գաղութներուն, Հայաստանին, Ար-
ցախին եւ Զաւախքին: Մշտանորոգ եւ երիտասարդ բարեսիրական միութիւնը տարի-
ներու ընթացքին արժեւորեց իր գոյութիւնը իր առաքելութեան ճամբով ժրաջան գոր-
ծունէութիւն ցուցաբերելով բարեհաւանական, ընկերային, դաստիարակչական եւ Հայա-
կեանքով բնագաւառներէն ներս:

Այս բուրդի կողքին ՀՕՄ-ի փայլուն ուղիին մէջ առանձնապատուկ տեղ գրաւեց հայ պատմական արժէքները, մշակութային հարստութիւնը եւ հայկական բարքերը պահպանելու եւ տարածելու սրբազան նպատակը: Ահա այս գծով է որ, ՀՕՄ-ի Թո-րոնթոյի «Ռուբին» մասնաճիւղը, քառորդ դար առաջ սկսած, ամէն տարի կը կազ-մակերպէ Տոհմիկ Օրեր, ներկայացնելով Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանի պատմական շրջանները եւ տարբեր երկիրներու մէջ գոյութիւն ունեցող հայկական գաղթօճախները իրենց պատմութեամբ, մշակոյթով, սովորոյթներով:

Այս անգամ 27-րդ Տոհմիկ Օրը կը կազմակերպենք նուերամ Սուրբ Երկրի եւ Յորդանանի հայկական գաղութներուն: Այսինքն պատմական Պաղեստինի, այսօր-
ուան Հրեաստանի, սուրբ քաղաքներուն, ինչպէս՝ Երուսաղէմ, Բեթղէհէմ, Նազարէթ,
նաեւ Եաֆֆա, Հայֆա եւ Յորդանանի Ամման եւ այլ քաղաքներ, ուր հայկական գա-
ղութ գոյութիւն ունեցած է կամ ունի մինչեւ օրս: Մենք կը ծրագրենք երկու օրերու
վրայ երկարող ձեռնարկներ, նախ՝ չաբաթ, 27 Նոյեմբերին ճաշկերոյթի երեկոյով տօ-
նակատարել, իսկ յաջորդ օրը՝ Կիրակի դասախօսական ցերեկոյթով մը նշել Տոհմիկ
Օրը:

2) Կարելի է անդրադառնալ Հրեաստանի եւ Յորդանանի հայ գաղութներու պատմականին:

Նախ պիտի սկսում երեւսադէմէն, որ կրնանք ըսել թէ հայկական սփիւռքի առաջին քաղաքը հանդիսացած է, ուր հայեր հայրենիքէն դուրս հայկական գաղութ եւ հարուստ ժառանգութիւն ստեղծած են: Առաջին հայերը՝ Տիգրան Մեծ թագաւորի գլխուորենքը, Ք. Ա. առաջին դարուն հասած են մինչեւ երեսացէմ: Զինուորներուն յաջորդած են հայ վաճառականներ: Իսկ 301 թուականին, երբ հայերը Քրիստոնէութիւնը ընդունած են պետական կրօն, հայ ուխտաւորներ սկսած են այցելել երեսացէմ եւ եկեղեցիներ ու վանքեր կառուցել Քրիստոսի սուրբ վայրերուն վրայ: Մինչեւ 7-րդ դար, հայ թագաւորներ, թագուհիներ եւ իշխաններ 70 վանքեր եւ եկեղեցիներ կառուցած են: Այդ եկեղեցիներէն մինչեւ այսօր հայութեան կը պատկանին Սրբոց Յակոբեանց տաճարը, Սրբոց Հրէշտակապետաց կամ Զրթենիի վանքը, Ս. Փրկիչ վանքը կամ Քրիստոսի բանտը:

Եթե ինքնաշարժիչի վրա չկան անհրաժեշտ փոխարկեր, ապա ինքնաշարժիչի վրա կանգնեցնելը և փոխարկերի անհրաժեշտության մասին խոսքի մեկնումը չի կարող հանգեցնել ինքնաշարժիչի վրա կանգնեցնելու և փոխարկերի անհրաժեշտության մասին խոսքի մեկնումը:

1099 թուականին խաչակիրները յաղողած են գրաւել Երուսաղէմը եւ ստեղծած Երուսաղէմի թագաւորութիւն: Խաչակրաց շրջանին, 12-րդ դարուն, Երուսաղէմի գահին հանգրիսացած են հայկական ծագում ունեցող թագուհիներ՝ Արտա թագուհին (1100-1105), Մորֆիա (1118-1127), Միւրիսեղ (1131-1153), Ազնէս (1162-1163) եւ Սիպլի (1186-1190): Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը վայելած է հայ թագուհիներուն բացառիկ հովանաւորութիւնն ու աջակցութիւնը, որոնք կառուցած կամ վերանորոգած են բազմաթիւ վանքեր եւ եկեղեցիներ:

Երուսաղէմի Հին քաղաքին մէջ կը գտնուի հայկական թաղամասը, Armenian Quarter, ուր կը գտնուին Հայոց Պատրիարքութիւնը եւ Ս. Յակոբեանց վանքը, որ պատասպարան տուած է եւ բացառիկ օգնութիւն ցուցաբերած Հայոց Յեղատպանութեանէն փրկուած եւ Երուսաղէմ ապաստանած հազարաւոր հայ ընտանիքներու:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը Սուրբ Թորոս մատուռին մէջ ձեռագիր-
ներու հարուստ հաւաքածոյ մը կը պահէ, շուրջ 4,000 ձեռագիրներով, որ իր քանակով
կը նկատուի երկրորդը՝ Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան մատենադարանէն ետք,
ուր կը պահուին շուրջ 20,000 ձեռագիրներ:

Երուսաղէմի մէջ Հայոց Պատրիարքարանը առաջինը եղած է որ հիմնած է տպարան (1833), աղջկանց վարժարան (Սրբոց Գայեանեանց Օրիորդաց վարժարան, 1862), լուսանկարչուիւն (Նսայի Դ. Պատրիարքի կողմէ, 1865-1885) եւ Երուսաղէմի յախճապակիի գեղարուեստը, որ բերուած է Քիւթահայլէն:

Խաչակրաց շրջանին Կրիկիայէն Սուրբ Երկիր հաստատուած հայեր հայկական գաղութներ ստեղծած են նաեւ Բեթղհէհէմի, Յոպպէի (Եաֆֆա) եւ Հայֆայի մէջ, ուր կառուցած են վանքեր եւ եկեղեցիներ:

Իսկ Յորդանանի մասին կարելի է ըսել, որ Հայոց Յեղասպանությունէն փրկուած եւ Յորդանան հասնող գաղթականներ զանազան քաղաքներու մէջ ստեղծած են հայկական գաղութներ, կառուցած են եկեղեցիներ եւ դպրոցներ: Հայերը, շնորհիւ իրենց պարկեշտութեան եւ աշխատասիրութեան, վայելած են Հաշիմեան թագաւորութեան բացառիկ բարեացակամ վերաբերմունքը, վստահութիւնն ու յարգանքը: Արտաքին Գործոց, Առողջապահութեան եւ Հաղորդագրութեան նախարարութիւններու մէջ բարձրաստիճան պաշտօններ ստանձնած են հայեր, Յորդանանի բանակի բժիշկները, ճարտարապետները, ընդհանուր ոստիկանապետը նաեւ թագաւորներուն անձնական բժիշկները, մեքենագէտները, մեքենավարները, լուսանկարիչները, գերձակը, խոհարարը եղած են հայեր:

3) Ի՞նչ ձեւով կը նախատեսէք տօնել սոյն ձեռնարկը:

Շաբաթ, 27 Նոյեմբերին, աւանդական ճաշկերոյթին կարելի պիտի ըլլայ վախելու գեղարուեստական ճոխ յայտագիր, եկեղեցական ու աշխարհիկ հայկական երգ ու նուազ, Սուրբ Երկրի եւ Յորդանանի հայկական գաղութներու մասին տեսերիզի ցուցադրութիւն: Կիրակի օր, 28 Նոյեմբերին, տեղի պիտի ունենայ դասախօսական ցերեկոյթ: Իբրեւ բանախօս Երուսաղէմէն յատկապէս հրաւիրուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի գիւանապետ՝ Հայր Կորիւն Վարդապետ Բաղդասարեան, որ պիտի խօսի Սուրբ Երկրի եւ Յորդանանի հայ գաղութներու մասին: Լաւալէն Տէր Յակոբ Քահանայ Գեաթայեան եւ Հրայր Բազէ հրաւիրուած են ներկայացնելու Սուրբ Երկրի

մասին իրենց անձնական փորձառութեան զեկոյցը: Նաեւ պիտի ներկայացուի զեղարուեստական յայտագիրը եւ տեսերիկը: Աւելցնեմ, որ կը ծրագրենք ճոխ ցուցադրութիւն մը երկու օրերու ընթացքին, ուր պիտի ցուցադրուին նշանաւոր Հայ լուսանկարիչներու գործերը եւ զանազան արժէքաւոր Հին ու նոր իրեր բերուած Սուրբ Երկրէն եւ Յորդանանէն: Ցուցադրութեան զրուած որոշ արժէքաւոր իրեր պիտի վաճառուին եւ տեղի պիտի ունենայ իրճակահանութիւն:

Զոյգ օրերուն, Օնթարիո նահանգի սահմանած Covid 19-ի համաճարակի բոլոր պայմանները խստիւ կը յարգուին եւ երկու պատուաւորները ստացած ըլլալու փաստաթուղթով ներկաները մուտք կը գործեն Հայ Կեդրոն:

4) Ամէն տարի յատուկ աշխատանք կը տարուէր գիրքի մը հրատարակութեան. կարելի է անդրադառնալ մանրամասնութեան:

Համաճարակի պարտադրած մեկուսացումը պատճառ դարձաւ, որ գիրքի պատ-
րաստութեան եւ Համադրումի բոլոր աշխատանքը ըլլայ առցանց եւ Հաղորդակցու-
թիւնները ե-նամակներով: Գիրքը ամբողջացած է բաւական ճոխ բովանդակութեամբ
պաշտօնական պատմամաներ, պատմական տեղեկութիւններ, գաղութներու եւ հայկա-
կան կառոյցներու մասին անցեալի եւ ներկայ իրավիճակի տեղեկութիւն, ականաւոր
անձերու կենսագրականներ, գունաւոր նկարներ եւ այլն:


Գրիբքին Համար որդեգրուած է Հովանաւորներու դռութիւնը: Ընտանիքներ եւ անհատներ Հովանաւորած են վանքեր, եկեղեցիներ, քաղաքներ, ինչպէս նաեւ գունաւոր էջեր: Բոլոր Հովանաւորներու ցանկերը կը գետեղուին գրիբքին մէջ:

Գիրքէն օրինակ մը պիտի նուիրուի իւրաքանչիւր հովանաւորի, նաեւ ձեռնարկին օրը պիտի բաժնուի բոլոր ներկաներուն: Հոս խորին շնորհակալութիւն կ'ուզենք յայտնել բոլոր նուիրատուներուն, յօգուածագիրներուն եւ լուսանկարները տրամադրող բոլոր անձնաւորութիւններուն:

Հայ Օգնութեան Միութեան Թորոնթոյի «Իւրբինա» մասնաճիւղի վարչութեան եւ Տոհմիկ Օրուան յանձնախումբին կողմէ՝ շնորհակալութիւն կը յայտնենք Հորիզոն շաբաթաթերթի անձնակազմին այս Հարցազրոյցին աւելիը ընծայելուն եւ ՀՕՄ-ի աշխատանքները միշտ քաջալերելուն համար:

Մեր խորին շնորհակալությունը կը յայտնենք նաեւ Հայ գաղութին, որ միշտ գնահատած է ՀՕՄ-ի գործունէությունը եւ ամէն տարի խուսնորամ ներկայ գտնուած է Տոհմիկ Օրերու այս եղակի ձեռնարկներուն:

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդին, որ այս բացառիկ առիթն օգտուին եւ մեզ հետ ըմբռնեն Սուրբ Երկրի եւ Յորդանանի մշակութային հարուստ ժառանգութիւնը՝ գեղարուեստական յայտագրի, երգ ու նուազի եւ դասախօսութիւններու ընդ-մէջէն:





ՈՒՍԱՌՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

Դ. ՏԱՐԻ, ԹԻՒ 12, Նոյեմբեր 2021

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ՊԱՏԳԱՄԸ



ԽՂՃԻՆ ՁԱՅՆԸ

«Խիղճն անհանգիստ է», «Խղճի խայթ կը զգամ», «Խղճահարություն մատնուած եմ»:

Յաճախ մեր ներաշխարհին մէջ նման ձայներ կը լսենք, որոնք մեզի հաշուեյարդարի կը կանչեն, հաշուե-տուութեան կը հրաւիրեն, անդրադարձ կատարելու, սխալը սրբագրելու և մեր ընթացքը փոխելու, հասնելու համար **ԿԱՏԱՐԵԱԼԻՆ**:

Որքանով խաղաղ է մեր հոգին...

Բնական է, որ յաճախ կ'ունենանք տագնապներ, նեղութիւններ, երբեմն այնպիսի մտածումներ, որոնք մեր հոգիները կ'ալեկոծեն և կը փոթորկեն:

Երբեմն չարը կը փորձէ տիրապետել և մեզի կը մղէ գործելու այնպիսի արարքներ, որոնք առաւել խղճա-հարութեան կը հասցնեն:

Երբ խղճին ձայնը կը լսենք՝ քաջ գիտնանք, որ այդ ձայնը մեր Տիրոջ ձայնն է, որ մեզ զգաստութեան կը հրաւիրէ, չարէն ու մեղքէն ազատագրուելու համար, և

ընդ միշտ ուղիղ ու լուսաւոր ճանապարհէն քալելու:

Հեռու մնանք ու չլսենք չարին, ձերբազատենք մենք մեզ չարին տիրապետութենէն և միաժամանակ զինուիք այնպիսի առաքինութիւններով, որոնք մեր հոգիները կը խաղաղեցնեն:

Մեր Տէրն ու Փրկիչը Յիսուս Քրիստոս մեծագոյն դասը տուաւ մեզի ըսելով. **«Երանի խաղաղարարներուն, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին» (Մտք. Ե.9)**: Այո՛, մեծագոյն պատիւը պէտք է զգանք Աստուծոյ որդին կոչուելու, սակայն, միևնոյն ժամանակ պէտք է աշխատինք, մշտական ճիգ թափենք, հաւատքով ու մանաւանդ աղօթքով հասնելու այդ սրբազան օրի-նութեան:

Անհրաժեշտ է մեր աշխարհի մէջ խաղաղութիւն հաստատել, այսինքն Աստուծոյ կողմէ տրուած բոլոր բարիքներն ու շնորհքները պահպանել: Այո՛, Քրիստոս Երանի կու տայ ո՛չ թէ խաղաղութիւն ցանկացողներուն, այլ՝ խաղաղութիւնը իրագործողներուն: Տակաւին, խա-ղաղութիւն կը նշանակէ հաշտութիւն, ո՛չ թէ միայն մարդոց հետ, այլ մանաւանդ՝ Աստուծոյ:


Քաջ պէտք է ըմբռնենք, որ Քրիստոս մեծագոյն հաշտարարը դարձաւ, երբ աշխարհ եկաւ՝ երկրի վրայ խաղաղութիւնը հաստատելու և մարդոց մէջ հաճութիւնը ամրացնելու:

Քրիստոնէական եկեղեցոյ պաշտօնեաները, հոգևոր առաջնորդները, հովիւներն ու իւրաքանչիւր քրիստոնէայ ունին այս կրկնակի պարտականութիւնները, մէկ կողմէ՝ հաշտեցնելու մարդը Աստուծոյ հետ, և միւս կողմէ՝ մարդը հաշտեցնելու իր նմանին հետ:

Հետևաբար **«Խղճի»** ձայնը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ ապահովագրութիւն մը, պաշտպանուելու կատարուող ու կատարուելիք սխալներէն ու անոնցմէ բխող փոր-ձութիւններէն ու մանաւանդ վտանգներէն:

Հետևաբար, քրիստոնէավայել ու Աստուածահաճոյ կեանք մը ապահովելու ու մանաւանդ մեր հոգևոր ներ-աշխարհը խաղաղ ու հանգիստ պահելու համար ուշադիր լսենք մեր **ԽՂՃԻ ՁԱՅՆԻՆ**:

ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



ՀԱՒԱՏՔ, ՅՈՅՍ, ՄԷՐ

«Ներկայիս, ուրեմն, միակ կարևոր բաներն են՝ հաւատքը, յոյսը և սէրը»
(Ա. Կր 13:13)

Պօղոս Առաքեալ Կորնթացիներուն ուղղած առաջին նամակի 13-րդ գլխուն մէջ կը խօսի սիրոյ մասին: Ան ամբողջ գլուխ մը կը բացատրէ սիրով լեցուն մարդուն յատկութիւններուն մասին և վերջին համարին մէջ կ'ըսէ. **«Ներկայիս, ուրեմն, միակ կարևոր բաներն են՝ հաւատքը, յոյսը և սէրը»** (Ա. Կր 13:13):

Առաքեալը իր այս խօսքին մէջ կ'անդրադառնայ Քրիստոնէական կրօնքի հիմնական երեք օղակներուն մասին, որոնք մէկը միւսը կ'ամբողջացնեն:

Խճողուած այս աշխարհին մէջ երբեմն Աստուծոյ հանդէպ մեր ունեցած հաւատքը կը կորսնցնենք, երբեմն կը յուսահատինք և երբեմն ալ սէրը կը մեռնի մեր մէջ: Սակայն պէտք է զգուշանանք, որովհետև Քրիստոնէութիւնը հիմնուած է այս երեքին վրայ: Չենք կրնար հաւատալ անձի մը, որուն չենք սիրեր և որմէ բան մը չենք յուսար: Չենք կրնար անձէ մը բան մը յուսալ, որուն չենք սիրեր: Ուստի, հաւատքը, յոյսը և սէրը զիրար կ'ամբողջացնեն և կը կազմեն Քրիստոնէական կրօնքի ամուր շղթան, որ ոչ ոք կրնայ փշրել:

ԻՆՉ Է ՀԱՒԱՏՔԸ

Հաւատքը վստահութիւն է: Պօղոս Առաքեալ Եբրայեցիներուն ուղղած նամակին մէջ կ'ըսէ. **«Հաւատք կը նշանակէ վստահ ըլլալ այն բաներուն, որոնց հանդէպ յոյս ունինք, և համոզուած ըլլալ այն բաներուն, որոնք չեն երևիր»** (Եբր 11:1):

Մենք՝ քրիստոնէաներս յոյս ունինք փրկութեան և յաիտենական կեանքին, և վստահ ենք, որ այս փրկութիւնը կ'իրագործուի միայն ու միայն Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Աստուածաշունչին մէջ շատ են այն անձերը, որոնք անսասան և ամուր հաւատք մը ունենին Աստուծոյ նկատմամբ և այդ իսկ պատճառաւ իրենց յոյսը դրած էին Տիրոջ վրայ: Անոնցմէ ամէնէն ցայտուն օրինակը՝ Յոբ երանելին է, անսահման հաւատքով և համբերութեամբ օժտուած անձ մը, որ միշտ ամուր հաւատք ունեցաւ և երբեք չվարանեցաւ իր հաւատքի կեանքին մէջ, նոյնիսկ, երբ իր ամբողջ հարստութիւնը, կիսն ու զաւակները սատանային կողմէ ոչնչացուեցան:

Նոր Կտակարանին մէջ ևս կը տեսնենք հաւատքի և յոյսի գործակցութեան օրինակներ, որոնցմէ նշանաւոր է Տեռատես կնոջ օրինակը: Տասներկու տարիներէ ի վեր արիւնահոսութենէ տառապող կինը, որ կուրօրէն կը հաւատար, թէ միայն Քրիստոս կրնար զինք բժշկել անտանելի ցաւէն, և վերջապէս բժշկուելու յոյսէն մղուած դպաւ Քրիստոսի քղանցքին և իսկոյն բժշկուեցաւ:

Երբ հաւատքով լիցքաւորուած կեանք մը կ'ապրինք, մեր դժուարութեանց, նեղութեանց և տկարութեանց ժամանակ աւելի տոկուն կը դառնանք և կը ձերբազատինք մեր դժուարութիւններէն: Հաւատքով կը փշոռենք մեր դիմաց ծառացած բոլոր խոչընդոտները, որոնք մեզ մեր ճշմարիտ հաւատքէն կը հեռացնեն:

ԻՆՉ Է ՅՈՅՍԸ

Յոյսը գերբնական առաքինութիւն մըն է, որ մարդս կը մղէ սպասելու և Աստուծմէ բարիք մը ակնկալելու: Մարդ արարածը երբ կը պայքարի չարին դէմ կը նշանակէ, թէ յոյս ունի բարիին: Ամէն բարիք աշխարհի մէջ յոյսի ճամբով է, որ կը գործուի: Հոգագործը մէկ հատիկ իսկ պիտի չնետէր հողին մէջ, եթէ չունենար այն յոյսը, որ ամէն մէկ հատիկ պիտի դառնայ ատոք հասկ:

Յոյսը, քրիստոնէութեան մէջ մասնաւորաբար և մարդկային առօրեային մէջ առհասարակ, շատ կարևոր տեղ կը գրաւէ: Սակայն, երբեմն կը գտնուին անձեր, որոնք յստակօրէն չեն գիտեր, թէ որմէ ինչ պիտի յուսան:

Մարդուն համար, այլ խօսքով՝ ճշմարիտ քրիստոնէային համար կայ մէկ և բացարձակ յոյսի աղբիւր, որ անկասկած նոյնինքն Յիսուս Քրիստոսն է: Քրիստոսի վրայ ունեցած մեր յոյսին միջոցաւ է, որ մենք կը դիմագրաւենք մեր այս ժամանակաւոր կեանքին դժուարութիւնները:

Պօղոս Առաքեալ Հռոմայեցիներուն ուղղած նամակին մէջ կ'ըսէ, թէ տառապանքը, նեղութիւնները, հալածանքները իրեն համբերութիւն բերին և այդ համբերութիւնը՝ տոկունութիւն և այդ տոկունութիւնը իրեն յոյս ներշնչեց: Այս իսկ պատճառով առաքեալը համարձակութեամբ արտայայտեց. **«Յոյսը ամօթով չի ձգեր»** (Հռ 5:5):

ԻՆՉ Է ՍԷՐԸ

Աստուած Իր սէրը արտայայտեց նախ ստեղծագործութեան ընդմէջէն: Մարդուն աճելու և բազմանալու շնորհքը՝ աստուածային սիրոյ արտայայտութիւն է: Թէև մարդ արարածը այս բոլորը տեսնելով հանդերձ հեռացաւ Աստուծմէ, սակայն Աստուած չհեռացաւ մարդէն, այլ՝ անկէալ մարդուն փրկութեան խոստում տալով, Աստուած անսպառ սէրը յայտնեց մարդուն, որովհետև Ան հոգացող ու գուրգուրացող Հայր է:

Աստուծոյ սէրը մարդուն հանդէպ անսահման է: Ան նոյնիսկ անկէալ ու մեղքի կապանքներուն մէջ շղթայուած մարդը կը սիրէ և այդ արտայայտութիւնը կը տեսնենք Որդիին մարդեղացման մէջ (հմմտ. Ա.Յհ 4:9): Որդիին մարդեղացումը, ուրիշ բան չէ եթէ ոչ մարդ արարածը ազատագրել մեղքի տիրապետութենէն և մարդը դարձնել որդեգիր զաւակը Աստուծոյ: Անոր սէրը անվախճան է, որովհետև իրագործուեցաւ ինքնընծայումով (հմմտ. Ա.Յհ 4:10), այլ խօսքով, Յիսուս մեր մեղքերուն, մեզի համար խաչ բարձրացաւ, Իր խաչով յաղթեց աշխարհին և մարդոց մեղքերը Իր վրայ կրելով Իր անձը զոհեց Իր արարածներուն համար:

Պօղոս առաքեալ իր առաքելութեան կորիզը սէրը կը դարձնէ և կ'ըսէ, թէ երբ մարդ արարածը մարդկային բազմազան առաւելութիւններ ունի և սէր չունի, ոչինչ կ'արժեն այդ առաւելութիւնները: Առաքեալին այդ մտածումները կու գան մեզի յիշեցնելու, թէ սէրը բանալին է միւս բոլոր առաքինութիւններուն: Սիրոյ պատճառաւ էր, որ Աստուած մարդացաւ և մարդուն խոնարհեցաւ, նոյն սիրոյ մղումով է, որ մարդը պիտի աստուածանայ և ժառանգէ սիրոյ կտակը:

Գիտնալէ ետք թէ՛ ինչ է հաւատքը, յոյսն ու սէրը, պէտք է մենք զմեզ հարց տանք՝ ո՞վ կրնայ այս բոլորը ունենալ: Այս բոլոր գանձերը կրնան ունենալ անոնք, որոնք Քրիստոսը իրենց մէջ կ'ապրեցնեն և իրենք Քրիստոսի մէջ կ'ապրին:

Սիրելի ընթերցողներ, հաւատքով զօրանանք, յոյսով առաջնորդուինք և սիրով լիցքաւորուինք, որպէսզի կարենանք մեր քրիստոնէական կեանքը ապրիլ և հասնիլ բարիին ու ճշմարիտին: Անգամ մը, որ Հաւատքով, Յոյսով ու Սիրով մկրտուեցանք՝ այլևս Սուրբ Հոգին է որ մեր մէջ կ'ապրի և Ինք մեզ կ'առաջնորդէ:

Պահենք մեր հաւատքը, յոյսն ու սէրը, որովհետև ներկայիս միակ կարևոր բաներն են (հմմտ. Ա. Կր13:13):

Հոգեշնորհ Տ. Յակոբ Արեղայ Եագուպեան

ԱՄԵՆԱՍՈՒՐԻ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ



ՈՐԴԻ ԱՍՏՈՒԱԾ

«Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ» (Յովհաննէս 3.16):

Յիսուս Քրիստոս «ԿԵՆԴԱՆԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆ» է (Մատթէոս 16.16), Ամենասուրբ Երրորդութեան երեք Անձերէն մէկը, Աստուածը՝ Աստուծմէ, Լոյսը՝ Լոյսէն, Աստուծոյ Օծեալը, նախաշաղկապեալ Բանը, Միածին Որդին, տիեզերքի Փրկիչը, արդարութեան Արեգակը, անժամանակ Ծնունդը, որ մարդոց փրկութեան համար ճշմարտապէս մարդացաւ Ս. Կոյս Մարիամէն, չարչարուեցաւ, խաչուեցաւ ու թաղուեցաւ՝ ազատագրելով մարդը մեղքի դատապարտութենէն, նոյն մարմինով երրորդ օրը յարութիւն առաւ, երկինք համբարձաւ և Հօրը աջ կողմը նստաւ:

«Որդին, Հօրը փառքին լոյսը և անոր էութեան ճշգրիտ պատկերը, որ իր խօսքին զօրութեամբ տիեզերքը կը պահէ, իր անձով մեր մեղքերը սրբելէ ետք՝ երկինքի մէջ նստաւ Աստուծոյ Գերագոյն Զօրութեան աջ կողմը» (Եբրայեցիս 1.3):

Յիսուս երկրորդ անգամ ըլլալով աշխարհի պիտի գայ զօրութեամբ և իր Հօրը փառքով, շրջապատուած՝ հրեշտակներով:

Պօղոս Առաքեալ այսպէս կը գրէ.

«Քրիստոս ինք՝ տեսանելի պատկերն է աներևոյթ Աստուծոյ. Հօրը Որդին, ծնած համայն ստեղծութեան տառաջ: Որովհետև Աստուած անով ստեղծեց ամէն բան, երկինքի մէջ թէ երկրի վրայ, երևելի թէ աներևոյթ, որոնց կարգին են՝ ոգեղէն աշխարհի գահակալներն ու տէրութիւնները, պետութիւններն ու իշխանութիւնները: Անոր ձեռքով և անոր համար ստեղծուեցաւ ամէն բան: Գոյութիւնն իր՝ ամէն բանէ առաջ է, և ամէն բան իրմով է որ գոյացաւ: Ա՛ն է Գլուխը մարմնին, այսինքն՝ Եկեղեցիին: Ա՛ն է սկիզբը, որ անդրանիկ ծնունդն եղաւ՝ մեռելներէն, որպէսզի ինք առաջնութիւնն ունենայ ամէն, ամէն բանի մէջ: Որովհետև, Հայրը ուզեց, որ Քրիստոս իր մէջ ունենայ աստուածային բնութեան լիութիւնը: Անոր ձեռքով ուզեց իր հետ հաշտեցնել ամէն բան, երկինքի մէջ թէ երկրի վրայ, խաղաղութիւն հաստատելով խաչի վրայ մահուամբն Անոր» (Կողոսացիս 1.15-20):

Իսկ ուրիշ տեղ մըն ալ կը գրէ՝

Յիսուս Քրիստոս «որ թէպէտ բնութեամբ Աստուած էր, և Աստուծոյ հաւասար ըլլալը հռչակելը իրեն համար Աստուծոյ պատիւը յափշտակել չէր նշանակեր, բայց կամաւորաբար ինքզինքը այդ պատիւէն մերկացուց՝ ծառայական մեր բնութիւնը իր վրայ առնելով, և մարդոց պէս եղաւ ու մարդկային կերպարանքով ճանչցուեցաւ: Ինքզինքը խոնարհեցուց և Աստուծոյ հնազանդեցաւ՝ յանձն առնելով մահը, և այն ալ՝ խաչի մահը: Ատոր համար ալ Աստուած զայն շատ անելի բարձրացուց և իրեն տուաւ այն անունը, որ վեր է բոլոր անուններէն, որպէսզի Յիսուսի անունին ծունկի գան բոլորը, երկնաւորներն ու երկրաւորները և սանդարամետականները, և ամէն լեզու դաւանի թէ Յիսուս Քրիստոս ՏԷՐ է, Հայր Աստուածը փառաւորելու համար» (Փիլիպպեցիս 2.6-11):



ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆ

ԳԼՈՒԽ 12

- Շաբաթ օրով կորցուած հասկեր (Մար 12. 1-8)
- Գօսացած ձեռքի բժշկութիւնը (Մար 12. 9-21)
- Յիսուս և Բէկղերուդ (Մար 12. 22-30)
- Մեղք և հայհոյութիւն Սուրբ Հոգիին դէմ (Մար 12. 31-37)
- Հրաշքի ինդրանք (Մար 12. 38-42)
- Պիղծ ոգիին վերադարձը (Մար 12. 43-45)
- Յիսուսի մայրն ու եղբայրները (Մար 12. 46-50)

ԱՆՆԵՐԵԼԻ ՄԵՂՔԸ (Մա 12. 31-37)

Ինչ կը հասկնանք Յիսուսի այս բառերէն. արևելեան ըսելաձէն է, ինչպէս այլ արտայայտութիւններ՝ օրինակ Յիսուսի մէկ այլ պատգամ՝ ով կ'ուզէ հետևիլ ինծի թող ուրանայ իր հայրն ու մայրը, թէ՛ պարզապէս կը նշանակէ, որ Սուրբ Հոգիին դէմ հայհոյելը գերազանցօրէն սարսափելի է:

Հին Կտակարանի մէջ ալ գոյութիւն ունին նման արտայայտութիւններ, ծանրակշիռ մեղքերու պարագային (Թւ 15. 30-31, Ա. Թգ 3. 14, Ես 22.14):

Պարզ կը դառնայ, որ այս պատգամները կը շեշտեն խնդրոյ առարկայ մեղքի մը չափազանց ծանրակշիռ ըլլալը:

Յիսուսն կ'ըսէ. **«Ով որ Մարդու Որդիին դէմ խօսք ըսէ, անոր պիտի ներուի, բայց ով Սուրբ Հոգիին դէմ ըսէ, անոր պիտի չներուի ոչ այս աշխարհի մէջ և ոչ ալ հանդերձեալին մէջ»:**

Եթէ այս խօսքը ընկալենք այնպէս ինչպէս կայ, իրօք դժուար է հասկնալ. ինչ տարբերութիւն Մարդու Որդիին և Սուրբ Հոգիին միջև. չէ՞ որ Քրիստոս անկիւնաքարն է

բոլոր ճշմարտութիւններուն:

Պէտք է իմանանք, որ երբայական ընկալմամբ մարդու որդի հասկացողութիւնը կը նշանակէ պարզապէս «մարդ», Յիսուս այս իմաստով կը գործածէ այս բանականացութիւնը, ըսել ուզելով՝ եթէ մարդ մը վատ կը կը խօսի մէկու մը դէմ՝ ներելի է. իսկ եթէ Սուրբ Հոգիին դէմ՝ անիկա աններելի է:

Հնարաւոր է, սխալ ընկալում ունենանք Աստուծոյ կողմէ ուղարկուած մարդկային պատգամաբերի հանդէպ, բայց անհնար է սխալ ընկալենք, երբ Աստուած կը խօսի Իր Սուրբ Հոգիին միջոցով: Հնարաւոր է, մարդկայինը մեզ առաջնորդէ սխալի, բայց երբ կը խօսի աստուածային պատգամաբերը, դժուար թէ անիկա սխալ հասկցուի: Այս ձևով հասկնալի կը դառնայ տարբերութիւնը երկու մեղքերու՝ Աստուծոյ մարդկային պատգամաբերի դէմ գործուած մեղքին, որ ինչքան ալ ծանրակշիռ է, ներելի է, բայց Աստուծոյ աստուածային պատգամաբերի դէմ գործուած մեղքը՝ կատարելապէս աններելի է:

Բայց ինչ կը նշանակէ մեղք Սուրբ Հոգիին դէմ:

Այստեղ նկատի պիտի ունենանք, որ Յիսուս այսօրուայ քրիստոնէական վարդապետութեան սկզբունքներու հիմքը չէ, որ նկատի ունի, այլ Սուրբ Հոգիի մասին հրէական ենթահողը:

Հրէական ուսուցման մէջ Սուրբ Հոգին երկու գործառնոյթ ունէր: Առաջինը՝ Սուրբ Հոգին կը բերէր Աստուծոյ ճշմարտութիւնը մարդոց. երկրորդ, Սուրբ Հոգին մարդոց կարող կը դարձնէր ճանչնալու և հասկնալու այն ճշմարտութիւնը, զոր կը տեսնէին, բայց մարդ կրնար կորսնցնել տեսած ճշմարտութիւնն ու բարին ճանչնալու կարողութիւնը, եթէ երկար ժամանակ ան փակէ իր աչքերն ու ականջները Աստուծոյ առջև, երկար ժամանակ թիկունք դարձնէ Աստուծոյ իրեն ուղարկուած պատգամներուն, երբ երկար ժամանակ նախընտրէ իր մտքերը միայն՝ Աստուծոյ խորհուրդներու փոխարէն, և այս ձևով հասնի այնտեղ, որ ալ պիտի չկարողանայ ճանչնալ Աստուծոյ ճշմարտութիւնը՝ բարին ու գեղեցիկը, երբ իր սեփական չարը իրեն լաւ երևայ:

Ահա այս վիճակի մէջ էին փարիսեցիներն ու օրէնսագէտները, որոնք մարմնացեալ բարին կը վերագրէին սատանային, որոնք Աստուծոյ Որդին կը կոչէին դևերու գործակից:

Սուրբ Հոգիին դէմ մեղքը յաճախակիօրէն մերժելն է Աստուծոյ կամքը. այնպիսի վիճակ, ուր չկայ զոջում և ապաշխարութիւն, և եթէ չկայ, ուրեմն չկայ թողութիւն, որովհետև ապաշխարութիւնն է միակ պայմանը թողութեան:



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prelature Armenienne du Canada



514-856-1200



prelacy@armenianprelacy.ca



www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Քրիստափոր Միքայէլեան



3401 Olivar Asselin
Montreal, Quebec H4J 1L5

ARF Youth launch pan-Armenian resistance

YEREVAN—The ARF Bureau youth office released the following communique:

Considering the dangers posed to the statehood of the Republic of Armenia, as well as the imperative duty of preventing the loss of Syunik and additional losses to Artsakh, the global family of Armenian Revolutionary Federation (ARF) youth organizations has launched a pan-Armenian resistance movement which will bring about the long-awaited revolution of our national values and priorities through consistent work and struggle.

Taking into account that,
The Turkish and Azerbaijani pan-Turkic ideology which seeks to wipe the Republics of Armenia and Artsakh off the map.

The anti-national and treasonous steps of the Armenian government are leading a process of unilateral territorial and political concessions aimed at imaginary peace.

The domestic political situation in the Republic of Armenia is at a dead-end. There is a need to wage a multi-faceted struggle alongside the work of the Parliamentary opposition within the National Assembly.

The ARF youth have resolved to launch a pan-national resistance movement, which focuses on five key fronts:

—Spread and amplify the struggle against the Turkish and Azerbaijani aggressors;

—Convey to the world powers that their policies cannot be implemented at the expense of the interests of the Armenian people;

—Using impactful and abrupt measures, reject the divisive and destructive policies of the Armenian government;

—Combat the expulsion of Armenians of Artsakh, the attempts of Turkey and Azerbaijan to isolate Artsakh from Armenia and the Diaspora and the emigration of the population of Syunik. The “Artsakh Reconstruction and Development” and “Towards Syunik” Program organized by ARF youth are great evidence of action in this direction;

—Unite and organize Armenian youth with the goal of creating a strong network of resistance.

Dearest Armenian youth,
During these critical times, we call on you to join this resistance movement. We do not have the luxury of sitting on the sidelines. Now is the time for a national awakening and to change the trajectory of the national downfall into a national uprising.

Ruling party faces defeats in municipal elections

YEREVAN—Armenian PM Nikol Pashinyan’s ruling Civil Contract Party faced defeats in the limited municipal elections held on October 17.

Elections were held in four major municipalities, including Goris, Meghri, Gyumri and Dilijan, as well as the smaller towns of Tatev and Tegh. The Civil Contract Party suffered setbacks in three out of the four municipalities, where it declared a decisive victory in the June 2021 snap parliamentary elections.

The municipal elections registered a low voter turnout of 33.2-percent, with only 55,410 of 166,753 eligible voters participating nationwide. The low level of participation contrasts

with the previous parliamentary elections in June, in which nearly half of eligible voters cast a ballot.

While the Civil Contract Party presented a party roster in every local election, the opposition adopted a less systematic approach, as single parties or opposition-aligned candidates competed in the various elections. Notably, the Armenian Revolutionary Federation (ARF) and the two previous parliamentary opposition factions, the Prosperous Armenia and Bright Armenia parties, which were deposed in June, did not present candidates in any of the elections.

Continued on page E2

Hampig Sassounian free, made it to Armenia

YEREVAN—After serving almost 40 years in prison, Hampig Sassounian has been freed.

“It is with incredible joy that I write to you from Armenia,” read Sassounian’s brief statement released to the public on October 28. “After nearly 40 years, it is my honour to set foot on Armenian soil, breathe its air, drink its water, and feel the warmth of my family and loved ones. I have been overwhelmed by the years of love and support you have given me. They kept me going through the darkest of days. My deepest gratitude to everyone that has written, visited, and kept me in your hearts. I am finally home.”

Sassounian had been serving a life sentence for assassinating Turkish Consul General Kemal Arikan in Los Angeles on January 28, 1982. He was 19 years old at the time. He is now 58.

ARF deputy dragged out of parliament

YEREVAN—An opposition lawmaker was forcibly dragged out of the parliamentary chamber for criticizing a pro-government deputy on October 26.

The present parliamentary term, which commenced after the snap elections in June of 2021, has been marked by hostility between the Civil Contract Party and the opposition factions, the Armenia Alliance and the I Have Honour alliance. State Protection Service (SPS) officers have been deployed to intervene in several physical altercations on the National Assembly floor. Leading parliamentarians with the ruling party have also faced criticism for instructing SPS guards to remove opposition deputies from the chamber for criticizing top government officials.

The latest incident took place after Gegham Manukyan, a deputy with the Armenian Revolutionary Federation (ARF), called Civil Contract Party lawmaker Vigen Khachatryan a “traitor” for his recent comments in the press regarding the Artsakh conflict.

“The person who renounces Artsakh is a traitor,” Manukyan insisted from the podium during the October 26 National Assembly sitting.

On October 15, Khachatryan told reporters that Armenian lawmakers should develop a unified position on the future status of Artsakh based on Armenian interests. “The idea that Armenia does not have a future without Artsakh is very dangerous, and it prevents us from guaranteeing the future of Artsakh,” he said.

The incident in the National Assembly comes on the heels of another rumored trilateral agreement between Armenia, Azerbaijan and Russia, one year after the signature of the ceasefire agreement ending the 2020 Artsakh War.

According to RIA Novosti, an unnamed source “familiar with the matter” told the Russian news agency that a meeting between Armenian PM Nikol Pashinyan, Azerbaijani President Ilham Aliyev and Russian President Vladimir Putin will apparently take place during the first 10 days of November.

Armenian news outlet Aliq media reported that two documents will be signed in early November, according to “reliable diplomatic sources.” Under the first document, Armenia and Azerbaijan will reportedly demarcate their shared border and recognize

each other’s territorial integrity. The second document will address the opening of transport links between the two countries.

The ARF has expressed its concerns about these rumours. Senior members of the ARF claim that Pashinyan is prepared to cede new territories to Azerbaijan. “It will be a new capitulation agreement, [and] Armenia will make new concessions,” National Assembly deputy speaker and chair of the Supreme Council of Armenia of the ARF Ishkhan Saghatelian told reporters on October 23.

Three days later, during a parliamentary sitting, deputy speaker from the ruling party Ruben Rubinyan interrupted Manukyan to warn him not to violate the “ethical rules” of the National Assembly. He asked Manukyan whether his accusation was directed toward a specific person.

When Manukyan confirmed that he was referring to Khachatryan, a shouting match ensued between the two lawmakers. Rubinyan ordered Manukyan’s microphone to be shut off and instructed the SPS to remove him from the podium. As two SPS guards dragged Manukyan away, Rubinyan called after them not to eject him from the chamber.

Rubinyan then shut off the audio on the live broadcast of the parliamentary session before calling a twenty-minute recess.

The presence of the SPS, a security agency that provides protection to top state officials, increased at the National Assembly since August 2, when the new parliament convened after the snap elections. On August 3, National Assembly speaker Alen Simonyan announced that he had updated security rules so that deputies would undergo inspections at checkpoints and metal detectors before entering the chamber.

On August 11, Simonyan suspended the livestream after a group of SPS guards entered the chamber to intervene in a brawl between the ruling and opposition parties. On August 25, SPS guards broke up two physical altercations, during which deputies rushed to the center of the room to kick and throw water bottles at each other. Earlier that week, Simonyan ordered SPS guards to remove an I Have Honor deputy from the chamber after she criticized the government.

Recent legislation increasing the penal-

Aurora honours Vartan Gregorian’s memory with a \$50,000 grant to the library of the Mekhitarist Congregation at San Lazzaro

VENICE — The Aurora Humanitarian Initiative has allocated \$50,000 to support the library of the Mekhitarist Congregation of San Lazzaro in memory of Aurora Co-Founder and member of the Aurora Prize Selection Committee Vartan Gregorian, who sadly passed away in 2021. The grant was announced during the 2021 Aurora Prize events in Venice.

Mr. Gregorian was an outstanding Armenian American humanitarian, scholar, author, educator and mentor, and had built a remarkable career that spanned several decades and crossed the lines of academia and philanthropy. Vartan Gregorian saw libraries as temples of humanity’s accumulated knowledge, and this grant honors his outstanding legacy.

“We are very glad for the opportunity to honour Vartan Gregorian’s memory in such a meaningful way. Over the years, Vartan played a vital role in many projects and organizations, but Aurora was always special to him. Today, we continue our work in his name, preserving Armenian heritage while advancing humanitarian efforts,” said Ruben Vardanyan,

Co-Founder of the Aurora Humanitarian Initiative.

The library of the Mekhitarist Congregation on the San Lazzaro Island contains more than 150,000 volumes in different languages, including manuscripts, ancient books and historical and scientific works. Abbot Mekhitar, the founder of the congregation, and his companions have always seen their mission in publishing, collecting and preserving books, especially Armenian ones. These days, the extensive repository of the Mekhitarist Congregation of the San Lazzaro carries one-of-a-kind historical artifacts, and the monastery remains one of the leading centres for Armenian studies.

“Vartan was a passionate advocate of education and enlightenment, and would have been delighted by Aurora’s decision to support this remarkable library. He referred to books as “stations of hope,” and this gift aims to make sure that the historic records of Armenian culture and heritage kept safe on San Lazzaro Island can be stations of hope for Armenians for centuries to come.” noted Nubar Afeyan, Co-Founder of the

Aurora Humanitarian Initiative.

“It is an honour for the Congregation to receive this generous gift from the Aurora Humanitarian Initiative, known for addressing urgent humanitarian challenges and providing a second chance to those who need it the most. Vartan Gregorian was truly an exceptional educator, and his legacy will be remembered forever. We are very grateful for this grant and are looking forward to putting it to good use, among the many needs of our library, in Vartan’s name,” said His Excellency Archbishop Levon Zekian, Pontifical Delegate of the Mekhitarist Congregation and Prelate of the Armenian Catholic Church in Turkey.

The 2021 Aurora Prize events took place in Venice, Italy, on October 8-10, 2021. During the weekend, guests and participants, including members of the Aurora Prize Selection Committee, Aurora Humanitarians, and other representatives of Aurora’s community, had a chance to explore the rich Armenian legacy of this location. The events in Venice marked the first time the Aurora Prize Ceremony was organized in Europe.

(ArmRadio)

A Mari Usque Ad Mare

CANADA'S INTERNATIONAL PROOF-OF-VACCINATION FOR COVID-19

